ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է.

1) տատանումների հաճախականությունից
2) տատանումների տևողությունից
3) տատանումների ուժգնությունից
4) տատանումների թափից

2 Մեծ սեքստան կազմված է

1) 6 աստիճանից և 4.5 տոնից
2) 7 աստիճանից և 6 տոնից
3) 7 աստիճանից և 5.5 տոնից
4) 6 աստիճանից և 5 տոնից

3 Մծց.5-ն այն ինտերվալն է, որը

1) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից
2) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից
3) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից
4) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից

4 Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով
2) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով
3) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
4) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով

5 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
2) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
4) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը

6 D_2 -ը կառուցվում է

1) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
2) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
3) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
4) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3

7 VII_3^4- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + մծց.2 + փ.3
2) մծց.2 + փ.3 + փ.3
3) մ.2 + փ.3 + փքց.2
4) փ.3 + մ.2 + փ.3

8 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
2) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2
3) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3
4) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2

9 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) գամմա
2) արպեջիո
3) տոնայնություն
4) հնչյունաշար

10 Համանուն տոնայնություններն ունեն

1) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
2) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
3) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ

11 Մելոդիկ մաժորին բնորոշ է

1) 7^+ աստիճանը
2) 6^-, 7^- աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
3) 6^-, 7^- աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
4) 6^+ աստիճանը

12 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Լիդիական, Միքսոլիդիական, Լոկրիական
2) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական
3) Միքսոլիդիական, Փռյուգիական, Հարմոնիկ
4) Իոնական, Անհեմիտոն, Դորիական

13 Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) չափ
2) տակտ
3) ռիթմ
4) մետր

14 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) սինկոպան, տրիոլը, կվարտոլը
2) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը
3) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը
4) սեքստոլը, կվինտոլը, տրելը

15 Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

1) պարզ չափերի քանակն է
2) նոտաների քանակն է
3) տակտերի քանակն է
4) հնչյունների քանակն է

16 ♯ նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

1) ալտի բանալի
2) տենորի բանալի
3) մեցցո-սոպրանոյի բանալի
4) սոպրանոյի բանալի

17 Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

1) տրեմոլո
2) տրիո
3) տրել
4) տրիոլ

18 Հետևյալ տերմինները՝ **Commodo**, **Prestissimo**, **Agitato**, **Amabile**, **Doloroso** նշանակում են (ըստ հերթականության)

1) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով
2) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր
3) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ
4) հարմարավետ, ծայրահեղ արագ, հուզված, հաճելի, թախծալի

19 Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

1) խիտ և լայն
2) խիտ և խառը
3) լայն և խառը
4) խիտ, լայն և խառը

20 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) իմիտացիա
2) ֆուգա
3) կանոն
4) կոնտրապունկտ

21 Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

1) հնագույն, խիստ և խառը
2) հնագույն, խառը և ազատ
3) հնագույն և ազատ
4) հնագույն, խիստ և ազատ

22 Ռոնդոն այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման

1) ABCAB
2) ABACAB[1]A
3) ABCBA
4) ABACA

23 Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

1) Կոմիտաս
2) Տիգրան Չուխաջյան
3) Բարսեղ Կանաչյան
4) Ռոմանոս Մելիքյան

24 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Ալեքսանդր Հարությունյան
2) Արամ Խաչատրյան
3) Առնո Բաբաջանյան
4) Գրիգոր Եղիազարյան

25 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հայկական «Հնգյակի» անդամ.

1) Ղազարոս Սարյան
2) Տիգրան Մանսուրյան
3) Երվանդ Երկանյան
4) Գրիգոր Եղիազարյան

26 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը

1) Ֆերենց Լիստ
2) Ֆրանց Շուբերտ
3) Ֆելիքս Մենդելսոն
4) Յոհաննես Բրամս

27 Ո՞ր դպրոցի ներկայացուցիչն է ջութակահար, կոմպոզիտոր Յան Ստամիցը.

1) Մանհայմյան դպրոց
2) Վիեննական դասական դպրոց
3) Չեխական դպրոց
4) Դարմշտադյան դպրոց

28 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Ղազարոս Սարյան
2) Տիգրան Մանսուրյան
3) Էդվարդ Միրզոյան
4) Անուշավան Տեր-Ղևոնդյան

29 Կլաուդիո Աբադո, Եվգենի Մրավինսկի, Անտոն Գակկել, Դավիթ Խանջյան՝ հանրաճանաչ

1) դիրիժորներ են
2) ջութակահարներ են
3) թավջութակահարներ են
4) կոմպոզիտորներ են

30 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.

1) մոդալ
2) դոդեկաֆոն
3) պոլիֆոնիկ
4) պուանտիլիստական

31 Ի. Ս. Բախի Բրանդենբուրգյան կոնցերտներից ո՞րն է քառամաս, և հետագայում այն անվանվել է «Սիմֆոնիա».

1) թիվ 6
2) թիվ 4
3) թիվ 3
4) թիվ 1

32 Ո՞ր ժանրում չի գրել կոմպոզիտոր և վիտուոզ ջութակահար Արկանջելո Կորելլին (XVII դար).

1) լարային քառյակ
2) եկեղեցական սոնատներ
3) տրիո-սոնատներ
4) կոնչերտո գրոսսո

33 Ո՞վ է հեղինակել «Աղեղի արվեստը» 50 վարիացիայից բաղկացած շարքը.

1) Անտոնիո Վիվալդի
2) Ջուզեպպե Տարտինի
3) Դոմենիկո Սկարլատտի
4) Արկանջելո Կորելլի

34 Ո՞վ է մի մինոր ջութակի կոնցերտի հեղինակը.



1) Յան Սիբելիուս
2) Նիկոլայ Մյասկովսկի
3) Ալեքսանդր Գլազունով
4) Ֆելիքս Մենդելսոն

35 Երգեհոնը

1) ստեղնաշարային գործիք է
2) ստեղնաշարային-փողային գործիք է
3) ստեղնաշարային-կսմիթային գործիք է
4) ստեղնաշարային- լարային գործիք է

36 Ջովաննի Պալեստրինա, Օրլանդո դի Լասսո, Ժոսկեն Դեպրե՝

1) կատարողներ են
2) կոմպոզիտորներ են
3) փիլիսոփաներ են
4) ջութակի վարպետներ են

37 Ու՞մ գրչին է պատկանում «Գերմանական Ռեքվիեմը»

1) Յոհաննես Բրամս
2) Ալֆրեդ Շնիտկե
3) Տիգրան Մանսուրյան
4) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ

38 Դմիտրի Շոստակովիչի ո՞ր սիմֆոնիան է բաղկացած 11 մասից.

1) թիվ 13
2) թիվ 10
3) թիվ 14
4) թիվ 5

39 Ո՞վ է «Նվիրում Պագանինիին» մենակատար ջութակի համար ստեղծագործության հեղինակը.

1) Պաուլ Հինդեմիթ
2) Ալֆրեդ Շնիտկե
3) Կառլ Օրֆ
4) Յանիս Քսենակիս

40 Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական ռապսոդիաների» հեղինակը.

1) Ֆերենց Լիստ
2) Յոհաննես Բրամս
3) Ռոբերտ Շուման
4) Ֆելիքս Մենդելսոն

41 Ի՞նչ գամմաներ է հարկավոր անցնել I դասարանում

1) 1 օկտավ
2) 2 օկտավ
3) խրոմատիկ
4) 3 օկտավ

42 Քանի՞ էտյուդ է պետք անցնել I դասարանում

1) 5-7
2) 10-12
3) 8-10
4) 2-4

43 Ո՞ր դասարանից է սկսվում զույգ նոտաների ծանոթությունը

1) II
2) I
3) III
4) IV

44 Ի՞նչ շտրիխներ են անցնում III դասարանում

1) Ստակատո, մարտլե, Վիոտի
2) Դետաշե, սոտիյե, սպիկատո
3) Դետաշե, լեգատո, մարտլե
4) Դետաշե, ստակատո, մարտլե

45 Ո՞ր հեղինակի էտյուդների կամ Կապրիսների գիրքը ներառված չէ ուսումնական ծրագրում

1) Յակոբ Դոնտ
2) Ռուդոլֆ Կրեյցեր
3) Ժակ Ֆերեոլ Մազաս
4) Նիկոլո Պագանինի

46 Նշված շտրիխներից ո՞րն է կատարվում նստած, լայն աղեղով

1) Սպիկատո
2) Դետաշե
3) Սոտիյե
4) Ստակատո

47 Ո՞ր կոմպոզիտորը չի պատկանում Բարոկո դարաշրջանին

1) Լյուդվիգ վան Բեթհովեն
2) Գեորգ Ֆրիդրիխ Հենդել
3) Յոհան Սեբաստիան Բախ
4) Անտոնիո Վիվալդի

48 Ո՞վ է եղել հանրահայտ ջութակահար Յաշա Հայֆեցի ազգությամբ հայ առաջին ուսուցիչը

1) Հովհաննես Ղալամյան
2) Հովհաննես Նալբանդյան
3) Հայկ Կյուտենյան
4) Դավիթ Դավթյան

49 Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ջութակի կոնցերտների մասերը սովորաբար հաջորդում են հետևյալ սկզբունքով.

1) Արագ, դանդաղ, արագ
2) Արագ, արագ, դանդաղ
3) Դանդաղ, դանդաղ, արագ
4) Դանդաղ, արագ, դանդաղ

50 Քանի՞ մասից է բաղկացած Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակներ» կոնցերտային ցիկլը

1) 10
2) 12
3) 18
4) 4

51 Ի՞նչ հաջորդականությամբ են գրված Յոհան Սեբաստիան Բախի մենանվագ Սոնատները

1) Դանդաղ, արագ, դանդաղ, արագ
2) Արագ, արագ, դանդաղ, դանդաղ
3) Դանդաղ, դանդաղ, արագ, արագ
4) Արագ, դանդաղ, արագ, դանդաղ

52 Ո՞ր դասարանից են աշակերտին փոխադրում ջութակից ալտի

1) IV
2) V
3) VII
4) II

53 Ու՞մ է նվիրված Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը

1) Վիկտոր Պիկայզեն
2) Յուլիան Սիտկովեցկի
3) Դավիդ Օյստրախ
4) Լեոնիդ Կոգան

54 17-18-րդ դարերի ո՞ր կոմպոզիտորի գրչին է պատկանում հանրահայտ «Դիվային դայլայլներ» սոնատը

1) Ֆրանչեսկո Ջեմինիանի
2) Ջուզեպե Տարտինի
3) Պիետրո Լոկատելի
4) Արկանջելո Կորելլի

55 Ու՞մ գրչին է պատկանում «24 կապրիս» op.1

1) Յակոբ Դոնտ
2) Հենրիկ Վենյավսկի
3) Նիկոլո Պագանինի
4) Պիեռ Ռոդե

56 Ո՞ր հայ թավջութակահարն է արժանացել Պյոտր Չայկովսկու անվան միջազգային մրցույթի I մրցանակի

1) Մեդեա Աբրահամյան
2) Նարեկ Հախնազարյան
3) Արամ Թալալյան
4) Գերոնտի Թալալյան

57 Նշեք հայ ջութակահարի, ով 33 ժամ անընդմեջ նվագելով, գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում

1) Ռուբեն Ահարոնյան
2) Հրաչյա Հարությունյան
3) Նիկոլայ Մադոյան
4) Էդուարդ Թադևոսյան

58 Հայ կոմպոզիտորներից ո՞վ է օգտագործել իր Ջութակի և դաշնամուրի համար գրված պիեսը Ջութակի և նվագախմբի համար կոնցերտի III մասում

1) Ղազարոս Սարյան
2) Ալեքսանդր Հարությունյան
3) Էդուարդ Հայրապետյան
4) Էդվարդ Միրզոյան

59 Թավջութակի և նվագախմբի համար քանի՞ կոնցերտ է պատկանում Յոզեֆ Հայդնի գրչին

1) 2
2) 5
3) 4
4) 3

60 Ինչպե՞ս է կոչվում Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի Կոնցերտը ջութակի, ալտի և նվագախմբի համար

1) Դուո Կոնցերտ
2) Սիմֆոնիա - Կոնչերտանտե
3) Երկխոսություն
4) Գրանդ Դուո